ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/48-1

ք. Երևան 26 .05. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պժկ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Մասիսի «Գարուն» կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ.Եղիազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 11 468 376 (տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ամսում,/ եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցներ նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2017թ:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձևոք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան

այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողը կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, Արարատի մարզ.Մասիս, 1-ին փող
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՇԲ» ՓԲԸ Մասիսի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 03804898
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/48-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	թռիչքների համար նախատեսված հագուստ /Բաճկոն՝ մորթե օձիքով, վատինե ներդիր. ձմեռ., բամբ. /	ՏՊ ՌԴ 8928-002 01132732-98: Գործվածքի բաղադրությունը՝ 100% բամբակյա, գունաքողարկված, մակերեսային խտությունը՝ 268 գ/մ², բամբակյա աստառի մակերեսայի նկատությունը 140 գ/մ² գույնը՝ պաշտպանական, վատինե ներդիրի հաստությունը՝ 20 մմ: Երեսացուի գործվածքի նախշերը և գույները բոլոր հավելվածի: Բաճկոնը մշակված է բամբակյա վատինե ներդիրով, բամբակյա կտորից աստառով: Բաճկոնի օձիքը բնական ոչխարի մորթուց, մոխրագույն կամ սև գույնի, լայնությունը՝ 18 սմ-ից ոչ պակաս: Օձիքի դարձերեսին աջ կողմից մեջ տեղով եզրից դեպի ներս 3 սմ հեռավորության վրա և ձախ կողմի եզրից դեպի ներս 11-13 սմ հեռավորության վրա կարվում են 15մմ տրամագծով պլաստմասե մեկական կոճակներ: Օձիքի դարձերեսին ձախ եզրից դեպի ներս 6-7սմ հեռավորության վրա կարվում է 12սմ x 5սմ չափսերի կարգավորվող գոտի, որի եզրին մշակվում է կոճկման օղակ: Օձիքի երեսացուն ներսից մշակվում է քաթանե գործվածքով՝ ամրակարված գիգզագաձև կարով: Օձիքի հետնամասում 15 սմ երկարությամբ մշակվում է անցք, անջրաթափանց գործվածքից արտադրված գլխանոցի պահպանման համար: Ձախ կողմի ներսից աստառի վրա մշակված է 18x15 սմ չափսերի ծոցագրպան: Ուսակարից 27 սմ դեպի ներքև կրծքամասի աջ և ձախ կողմերում ներկարված են 2 շեղանկյուն գրպաններ, որոնք փակվում են 18 սմ երկարությամբ ուժեղացված շնիկով մետաղյա շղթաներով, որից ձախ գրպանում նախատեսված է ՊՄ տեսակի ատրճանակ կրելու համար պատյան՝ երեսացուի գործվածքից, չափսը 19x9սմ: Պատյանի ներսից ամրացվում է 1 մ երկարության քուղ՝ մետաղական բռնակով: Աջ գրպանի խորությունը 23սմ, գրպանի մեջ ներկարված է 18սմx6սմ չափսի գաղտնի գրպան նախատեսված դանակի համար: Վերևի գրպանների կենտրոնից 17 սմ դեպի ներքև առկա են 800" թեքությամբ կողային գրպաններ, եզրերը մշակված 5-7 մմ լայնության տիսմայով: Թիկունքը բաղկացած է 2 մասից մեջ տեղով միացած ուղղահայաց կարով: Բաճկոնի ներքին եզրը մշակված է 5սմ լայնությամբ մանժետով, որի մեջ ներկարված է 2,5-2,7 լայնության կարգավորող գոտի, որի երկու եզրերը մանժետից դուրս են 9 սմ-ի չափով: Կողային կարերից 12 սմ հեռավորության վրա մանժետով մշակված են մետաղյա կարգավորող օղակներ: Բաճկոնը կոճկվում է մետաղյա շղթաներով ուժեղացված երկուական շնիկներով: Բաճկոնի ներքևի եզրից 5 սմ բարձրության վրա մշակվում են հաջորդական 2 մետաղյա կոճգամներ՝ կոճգամների միջև հեռավորությունը 4-5 սմ: Թևքերի ներդիրը մշակված է բամբակյա վատինայով: Թևքերի դաստակների մասում ներսի կողմից մշակված են 5սմ լայնությամբ կիսաբրդյա գործվածքից բազկակալներ, թևքի եզրերը ամրակարված են տիսմայով:Արմունկները մշակված են 24x16սմ չափսերի շեղանկյուն արմնկակալներով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:Բաճկոնի ընդհանուր նկարագրին համարժեք: Բաճկոնի ներսի կողմի ձախակողմյան փեշին ներքևից 3սմ բարձրության վրա պետք է ունենա տպագրական ներկով դրոշմ կամ պիտակ , որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկակա պայմանի համարը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: **Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը 2%:** Փաթեթավորումը՝ հակերով, հակի մեջ 5 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ըստ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:
2	թռիչքների համար նախատեսված հագուստ Կոստյում /կուրտկա և կոմբինիզոն/՝ գարնանային-աշնանային, բամբակյա, վատինե ներդիրով	ՏՊ ՌԴ 8928-002 01132732-98: Գործվածքի բաղադրությունը՝ 100% բամբակյա, գունաքողարկված, մակերեսային խտությունը՝ 250 գ/մ2, բամբակյա աստառի մակերեսային խտությունը 140 գ/մ2գույնը՝ պաշտպանական,վատինե ներդիրի հաստությունը՝ 15 մմ: Երեսացուի գործվածքի նախշերը և գույները բոլոր հավելվածի: Բաճկոնը՝ օձիքը բնական ոչխարի մորթուց, մոխրագույն կամ սև գույնի: Բաճկոնը մշակված է բամբակյա վատինե ներդիրով, բամբակյա կտորից աստառով: Օձիքի լայնությունը՝ 18 սմ-ից ոչ պակաս: Օձիքի դարձերեսին աջ կողմից մեջ տեղով եզրից դեպի ներս 3 սմ հեռավորության վրա և ձախ կողմի եզրից դեպի ներս 11-13 սմ հեռավորության վրա կարվում են 15 մմ տրամագծով պլաստմասե մեկական կոճակներ: Օձիքի դարձ երեսին ձախ եզրից դեպի ներս 6-7սմ հեռավորության վրա կարվում է 12սմ x 5սմ չափսերի կարգավորվող գոտի, որի եզրին մշակվում է կոճկման օղակ: Օձիքի երեսացուն ներսից մշակվում է քաթանե գործվածքով՝ ամրակարված գիգզագաձև կարով: Օձիքի հետնամասում 15 սմ երկարությամբ մշակվում է անցք անջրաթափանց գործվածքից գլխանոցի պահպանման համար: Ձախ կողմի ներսից աստառի վրա մշակված է 18x15 սմ չափսերի ծոցագրպան: Ուսակարից 27 սմ դեպի ներքև կրծքամասի աջ և ձախ կողմերում ներկարված են 2 շեղանկյուն գրպաններ, որոնք փակվումեն 18 սմ երկարությամբ ուժեղացված շնիկով մետաղյա շղթաներով, որից ձախ գրպանը նախատեսված է ՊՄ տեսակի ատրճանակ կրելու համար պատյան՝ երեսացուի գործվածքից, չափսը 19x9 սմ:Պատյանի ներսից ամրացվում է քուղ 1մ՝ մետաղական բռնակով: Աջ գրպանի խորությունը 23 սմ, գրպանի մեջ ներկարված է 18սմx6 սմ չափսերի դանակի համար նախատեսված գաղտնի գրպան: Վերևի գրպանների կենտրոնից 17 սմ դեպի ներքև առկան 800 թեքությամբ կողային գրպաններ, եզրերը մշակված 5-7 մմ լայնության տիսմայով: Թիկունքը բաղկացած է 2 մասից մեջ տեղով միացած ուղղահայաց կարով: Բաճկոնի ներքին եզրը մշակված է 5սմ լայնությամբ մանժետով, որի մեջ ներկարված է 2,5 2,7սմ լայնության կարգավորող գոտի, որի երկու եզրերը մանժետից դուրս են 9 սմ-ի չափով: Կողային կարերից 12 սմ հեռավորության վրա մանժետով մշակված են մետաղյա կարգավորող օղակներ: Բաճկոնը կոճկվում է մետաղյա շղթաներով ուժեղացված երկուական շնիկներով: Բաճկոնի ներքևի եզրից 4 սմ բարձրության վրա մշակվում են հաջորդական 2 մետաղյա կոճգամներ՝ կոճգամների միջև հեռավորությունը 3-4 սմ: Թևքերի ներդիրը մշակված է բամբակյա վատինայով: Թևքերի դաստակների մասում ներսի կողմից մշակված են 5 սմ լայնությամբ կիսաբրդյա գործվածքից բազկակալներ, թևքի եզրերը ամրակարված են տիսմայով:Արմունկները մշակված են 24x16սմ չափսերի շեղանկյուն արմնկակալներով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Կոմբինիզոնը ամբողջությամբ մշակված է բամբակյա վատինե ներդիրով, աստառը բամբակյա կտորից: Կոմբինիզոնն ունի 7 սմ լայնության 2 ուսակալներ, որոնք ամրանում են միմյանց 5սմ լայնության էլաստիկ ժապավեններով: Ուսափոկերի ներքին եզրերից դեպի ներս 11-12 սմ հեռավորության վրա մշակված են կամրջակներ: Կրծքամասի աջ և ձախ կողմերին ամրացված են 14x12 սմ չափսի վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մետաղյա շղթաներով ուժեղացված շնիկներով, որոնք ծածկվում է պաշտպանիչ կափույրներով՝ 2 կոճգամների միջոցով: Կոմբինիզոնը կոճկվում է մետաղյա հետադարձ ուժեղացված 2 շնիկներով շղթայով: Թիկունքի մասի գոտկատեղում ներկարված է 3 5 սմ էլաստիկ ժապավեն: Փողերի ծնկամասերից 23 սմ դեպի վեր կարված են 26x20 սմ չափսի վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մետաղյա շղթաներով ուժեղացված շնիկներով: Գրպանները փակվում են պաշտպանիչ կափույրներով՝ 2 մետաղյա կոճգամների միջոցով: Փողերի ծնկամասը մշակված է 26x21սմ չափսի վրադիր շերտով: Փողերի եզրից 2 սմ դեպի վեր տեղադրվում են կարգավորող երկու կոճգամներ: Շեքամասը և նստատեղը սովորական ստանդարտից ազատ է՝ շարժունակության համար: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Կոստյումի ընդհանուր նկարագրին համարժեք: Բաճկոնի ներքևից երրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը 2%: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ՝ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար

		կազմակերպությունը պետք է ներկայացնի երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ըստ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:
3	ենջազգեստներ /Ներքնաշոր՝ /շապիկ և վարտիք/ բրդյա/	ГОСТ 20462-87 կազմված է շապիկից և վարտիքից: Արտադրվում է բրդյա գործվածքից:Գույնը պաշտպանական կամ մոխրագույն երանգի:Մակերեսային խտությունը 160 գրամից ոչ պակաս: Շապիկը ուղիղ կտրվածքի, կլոր կտրվածքով կրկնակի ծալված շերտաբազրիկով: Թևերը ուղիղ միակար, թևի եզրերը կրկնակի մանժետով, մանժետը առանց միացման կարերի կամ համարժեք: Վարտիքի գոտին էլաստիկ ժապավենով: Վարտիքի ներքևի եզրերը մշակված է կրկնակի ծալված, շերտաբազրիկով:Շեղումներն ըստ ԳՕՍՏ-ի: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Ներքնաշորի ընդհանուր նկարագրին համարժեք: Շապիկի և վարտիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ՝ 20 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ըստ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազը մեկ ամիս առաջ:
4	թռիչքների համար նախատեսված հագուստ /Կոստյում՝ թռիչքային, բամբակյա, ամառային/	Կոստյումը բաղկացած է բաճկոնից և տարատից: Կտորի գործվածքի բաղադրությունը՝ 100% բամբակյա, գունաքողարկված, մակերեսային խտությունը՝ 240 գ/մ2: Երեսացուի գործվածքի նախշերը և գույները ըստ հավելվածի: Բաճկոնի օձիքի լայնությունը 8 սմ է: Ուխակարից 27 սմ դեպի ներքև կրծքամասի աջ և ձախ կողմերում ներկարված են 2 շեղանկյուն գրպաններ, որոնք փակվում են 18 սմ երկարությամբ ուժեղացված շնիկով մետաղյա շղթաներով, որից ձախ գրպանը նախատեսված է ՊՍ տեսակի ատրճանակ կրելու համար պատյան՝ երեսացուի գործվածքից, չափսը 19x9 սմ: Պատյանի ներսից ամրացվում է քուդ 1մ՝ մետաղական բռնակով: Աջ գրպանի խորությունը 23 սմ, գրպանի մեջ ներկարված է 18 սմ x 6 սմ չափսերի դանակի համար նախատեսված գաղտնի գրպան: Աջ կողմի գրպանի ներսից կարված է ծոցագրպանիկ 17x8 սմ չափսի,որը փակվում է 15 մմ պլաստմասե կոճակով: Թիկունքամասը մշակված է կոկետկայով: Կոկետկայի վրա մշակված են 2 դարձածալեր՝ օդափոխության համար: Բաճկոնի ներքին եզրը մշակված է 5 սմ լայնությամբ մանժետով, որի կողքերում ներկարված է 5 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն: Բաճկոնը կոճկվում է մետաղյա շղթայով ուժեղացված շնիկով: Բաճկոնի ներքևի եզրից 2,5 սմ բարձրության վրա մշակվում է մետաղյա կոճգամ: Թևատակերին մշակված են եռանկյունաձև ցանցեր 3x5սմ՝ օդափոխության համար: Թևքերի դաստակները մշակված են 6սմ լայնությամբ մանժետով՝ նեկարված էլաստիկ ժապավենով: Ձախ թևքին՝ ուսագլխից 9սմ ներքև վրակարված է 17x14սմ չափսի գրպան, որը ուղղահայաց փակվում է մետաղական շղթայով ուժեղացված շնիկով: Գրպանին վրակարված է 11սմ x 7սմ չափսի գրպանիկ, որը փակվում է կափույրով կպչուն ժապավենի միջոցով: Տաբատ տաբատի գոտկատեղում մշակված են 6 հատ կամրջակներ: Կամրջակների աջ և ձախ կողմերից ամեն երրորդի վրա մշակված է 10 մմ պլաստմասե կոճակի օղակներ 1,5 մ երկարությամբ տաբատի ձգիչի համար, որը կապվում է առջևի կամրջակների վրա գտնվող մետաղյա կրկնակի կիսաօղակներին: Տաբատը կոճկվում է մետաղական շղթայով և մեկ 15մմ պլաստմասե կոճակով գոտկատեղում: Տաբատի վրա մշակված են կողային գրպաններ: Աջ գրպանի ներսի կողմից մշակված է միջանցիկ անցք և գաղտնի գրպան: Տաբատի առաջամասում ծնկերից վերև մշակված են 25x18 սմ չափսի մեկական վրակար գրպաններ, որոնք փակվում են և բացվում են կրկնակի մետաղյա միաձույլ ուժային շնիկներով շղթաներով: Աջ գրպանի կողամասում գուգահեռ մշակված է 15սմ x 6 սմ չափսի գրպան, որը կոճկվում է մետաղական կոճգամով վերևից: Գրպանի ներսից ամրացվում է քուդ 1մ՝ մետաղական բռնակով: Ծնկների գրպանների ներքին եզրից 11սմ դեպի ներքև կողային կարերի ուղղությամբ մշակված են երկուական մետաղական օղակներ: Աջ գրպանի վերին եզրին հավասար կողային կարի ուղղությամբ նույնպես մշակված է մեկ մետաղյա օղակ: Շեղամասը մշակված է օդափոխության համար նախատեսված եռանկյունաձև ցանցով կենտրոնից 8 սմ հեռավորության վրա: Տաբատի փողքերի ներքևի մասում մշակված են մեկական մետաղական կոճգամներ 8սմ հեռավորության վրա՝ տաբատի ներսությունը հարմարեցնելու համար: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը 2%: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Կոստյումի ընդհանուր նկարագրին համարժեք: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ՝ 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ըստ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:
5	թռիչքների համար նախատեսված հագուստ /Կոստյում՝ տեխնիկական, բամբակյա, ամառային/	Կոստյումը բաղկացած է բաճկոնից և տարատից: Կտորի գործվածքի բաղադրությունը՝ 100% բամբակյա, մակերեսային խտությունը՝ 240 գ/մ2, գույնը մուգ կապույտ: Բաճկոնի օձիքի լայնությունը 8սմ է: Ուխակարից 27 սմ դեպի ներքև կրծքամասի աջ և ձախ կողմերում ներկարված են 2 շեղանկյուն գրպաններ, որոնք փակվում են 18 սմ երկարությամբ ուժեղացված շնիկով մետաղյա շղթաներով, որից ձախ գրպանը նախատեսված է ՊՍ տեսակի ատրճանակ կրելու համար պատյան՝ երեսացուի գործվածքից, չափսը 19սմx 9սմ: Պատյանի ներսից ամրացվում է քուդ 1մ՝ մետաղական բռնակով: Աջ գրպանի խորությունը 23սմ, գրպանի մեջ ներկարված է 18սմx6սմ չափսերի դանակի համար նախատեսված գաղտնի գրպան: Աջ կողմի գրպանի ներսից կարված է ծոցագրպանիկ 17սմx8սմ չափսի,որը փակվում է 15մմ-ց պլաստմասե կոճակով: Թիկունքամասը մշակված է կոկետկայով: Կոկետկայի վրա մշակված են 2 դարձածալեր՝ օդափոխության համար: Բաճկոնի ներքին եզրը մշակված է 5սմ լայնությամբ մանժետով, որի վրա կարված է 2.5-2.7 լայնության կարգավորող գոտի, որի երկու եզրերը մանժետից դուրս են 9 սմ ի չափով: Կողային կարերից 12 սմ հեռավորության վրա մանժետով մշակված են մետաղյա կարգավորող օղակներ: Բաճկոնը կոճկվում է մետաղյա շղթայով ուժեղացված շնիկով: Բաճկոնի ներքևի եզրից 2.5 սմ բարձրության վրա մշակվում է մետաղյա կոճգամ: Թևատակերին մշակված են եռանկյունաձև 3x5սմ չափսի ցանցեր՝օդափոխության համար: Թևքերի դաստակները ազատաթող են: Արմունկները մշակված են 24սմx16սմ չափսերի շեղանկյուն արմնկակալներով: Ձախ թևքին ուսակարից 9 սմ ներքև կարված է գրպան 15սմ x 7 սմ կափույրով, որը մետաղյա կոճկվում է կոճգամով: Տաբատի գոտկատեղում մշակված են 6 հատ կամրջակներ: Կամրջակների աջ և ձախ կողմերից ամեն երրորդի վրա մշակված է 10 մմ պլաստմասե կոճակի օղակներ 1,5 մ երկարությամբ տաբատի ձգիչի համար, որը կապվում է առջևի կամրջակների վրա գտնվող մետաղյա կրկնակի կիսաօղակներին: Տաբատը կոճկվում է մետաղական շղթայով և մեկ 15մմ պլաստմասե կոճակով գոտկատեղում: Տաբատի վրա մշակված են կողային գրպաններ: Տաբատի առաջամասում ծնկերից վերև մշակված են 25սմ x 18 սմ չափսի մեկական վրա կարգրպաններ, որոնք փակվում են մետաղյա միաձույլ ուժային շնիկով շղթաներով: Շեղամասը մշակված է օդափոխության համար նախատեսված եռանկյունաձև ցանց: Տաբատի փողքերի ներքևի մասում մշակված են մեկական մետաղական կոճգամներ 10 սմ հեռավորության վրա՝ տաբատի ներությունը հարմարեցման համար: Փողքերի ծնկամասը մշակված է 26սմ x 21սմ չափսի վրադիր շերտով:Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը 2%:Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Կոստյումի ընդհանուր նկարագրին համարժեք: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ՝ 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է

		ներկայացնի երևացող գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ըստ չափերի թանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:
6	ննջազգեստներ /Ներքնաշոր՝ մետաքսե/	ГОСТ 20462-87 լրացված է շապիկից և վարտիքից: Արտադրվում է մետաքսյա գործվածքից: Գույնը պաշտպանական կամ մոխրագույն երանգի:Մակկոնսային խտությունը 140 գրամից ոչ պակաս: Շապիկը ուղիղ կտրվածքի, կլոր վզով, կրկնակի ծալված շերտաբազրիկով: Թևերը ուղիղ, միակար, թևի եզրերը կրկնակի մանժետով, մանժետը առանց միացման կարերի: Վարտիքի գոտին Լաստիկ ժապավենով: Վարտիքի ներքևի եզրերը մշակված է կրկնակի ծալված, շերտաբազրիկով կամ համարժեք: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Ներքնաշորի ընդհանուր նկարագրին համարժեք: Շապիկի և վարտիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ՝ 20 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումներն ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի երևացող գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ըստ չափերի թանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

Ծանոթություն՝

1. Ապրանքների տեխնիկական պայմանները համաձայնեցվում են պատվիրատուի հետ:
2. Ապրանքների ձեռք բերման անհրաժեշտ պայման է դրանց չօգտագործված լինելը:
3. Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ.Մասիս, 1-ին փող
«ԱՇԲ» ՓԲԸ Մասիսի մ/ճ
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

տնօրեն

Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-7/48-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Անվանումը	Չ/Ա	Քանակը	Ապրանքի մատակարարումը ըստ ամիսների 2017թ			Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
				օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր		
1	թռիչքների համար նախատեսված հագուստ /Բուճկոն՝ մոդթե օձիքով, վատինե ներդիր. ձմեռ., բամբ./	հատ	68	68			18000	1224000
2	թռիչքների համար նախատեսված հագուստ Կոստյում /կուրտկա և կոմբինիզոն/՝ գարնանային-աշնանային, բամբակյա, վատինե ներդիրով	լրակազմ	100	50	50		28998	2899800
3	ենջազգեստներ /Ներքնաշոր՝ /շապիկ և վարտիք/ բրդյա/	լրակազմ	144	144			7398	1065312
4	թռիչքների համար նախատեսված հագուստ /Կոստյում՝ թռիչքային, բամբակյա, ամառային/	լրակազմ	150	75	75		11298	1694700
5	թռիչքների համար նախատեսված հագուստ /Կոստյում՝ տեխնիկական, բամբակյա, ամառային/	լրակազմ	370	150	150	70	9744	3605280
6	ենջազգեստներ /Ներքնաշոր՝ մետաքսե/	լրակազմ	158	100	58		6198	979284
		Ընդամենը						11468376

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ.Մասիս, 1-ին փող
«ԱՇԲ» ՓԲԸ Մասիսի մ/ճ
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

տնօրեն

Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/48-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV դասակարգումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ*				
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	թռիչքների համար նախատեսված հագուստ /Բաճկոն՝ մորթե օձիքով, վատինե ներդիր. ձմեռ., բամբ. /	18131100/1/4/2	1224000	1224000	1224000	1224000	1224000
2	թռիչքների համար նախատեսված հագուստ Կոստյում /կուրտկա և կոմբինիզոն/ գարնանային-աշնանային, բամբակյա, վատինե ներդիրով	18131100/3/4/20	1449900	2899800	2899800	2899800	2899800
3	Ներքնազգեստներ /Ներքնաշոր՝ /շապիկ և վարտիք/ բրդյա/	18311170/2/4/20	1065312	1065312	1065312	1065312	1065312
4	թռիչքների համար նախատեսված հագուստ /Կոստյում՝ թռիչքային, բամբակյա, ամառային/	18131100/4/4/20	847350	1694700	1694700	1694700	1694700
5	թռիչքների համար նախատեսված հագուստ /Կոստյում՝ տեխնիկական, բամբակյա, ամառային/	18131100/5/4/20	1461600	2923200	3605280	3605280	3605280
6	Ներքնազգեստներ /Ներքնաշոր՝ մետաքսե/	18311170/3/4/20	619800	979284	979284	979284	979284

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ.Մասիս, 1-ին փող
«ԱՇԲ» ՓԲԸ Մասիսի մ/ճ
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

տնօրեն

Լ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-7/48-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «__ » «_ _____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-7/48-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն